



ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԿՈՒՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գեղարքունիքի մարզ
գ. Բերդկունք
Էլ. փոստ berdkung.gegharquniq@mta.gov.am

17 ՀՈՒՆՎԱՐ 2020թ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 4

2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՐԿԵՐԻ, ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՈՒ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ, 19-րդ և 20-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի՝ 4-րդ և 5-րդ, 11-րդ հոդվածի կետերը և 12-րդ հոդվածի 1-ին կետի ա/,գ/ ենթակետի, 3-րդ, 6-րդ, 12-րդ կետի բ/ ենթակետի ու աղբահանության և սանիտարական մաքրման մասին օրենքի պահանջները՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Բերդկունք համայնքի 2020թ. տեղական տուրքերի և վճարների հետևյալ տեսակները և դրույքաչափերը.
 - 1.1/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլատվության համար տեղական տուրքը սահմանվում է՝
 - հիմնական օբյեկտների համար՝
 - ա/ մինչև 300ք/մ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200ք/մ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 /յոթ հազար հինգ հարյուր/ հազար ՀՀ դրամ:
 - ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
 - գ/ մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երեք հազար ՀՀ դրամ
 - դ/ 20 և ավել քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հինգ հազար ՀՀ դրամ
 - 1.2/ Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ
 - 1.3 Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների,